ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2023 թվականի N 1003-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխի դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 29.08.2006թ. թիվ 13-Ն հրամանով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1" 2023 թվականի հոկտեմբերի 30-ին ժամը՝ 11:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-3/ թափուր պաշտոնի մրցույթ:

2. 2023թվականի հոկտեմբերի 30-ին ժամը՝ 14:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-17/ թափուր պաշտոնի մրցույթ:

3.Ապահովել համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների հայտարարության հրապարակումը:

4.Սույն որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մասին պատշաճ տեղեկացնել ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմին:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 28
Խոյ համայնք, գ. Գեղակերտ